ՉԱՐ ԿԵՍՈՒՐԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի չար կեսուր ունենըմ ա մի սիրուն հարսը։ Էդ հարսը պատճառավոր ա ըլըմ, հմա կեսուրն ասըմ ա.— Գիրազնամուտ ու ուրփաթամուտ էլ աշխատի։
Հմա հայ-քրիստոնեն էդ բանը կանե՞։ Հարսն ամեն օր ձգըմ ա, մենակ գիրակնամուտն ու ուրփաթամուտը պիըմ ա։ Կեսուրն էլ ջգրվըմ ա, խտոր ընգնելու օրը դուռը վրեն ծածկըմ ա, դուս գնըմ։
Էն ցավը բռնած վախտը իրեք աղունակ կտրովը տուն են գալիս։ Նրանցից մինը տատմեր աբլրմ, մինը թևը բռնըմ ա, մինն էլ տեղը շինըմ։ Դրան ազատըմ են ու առոք-փառոք խտոր գձըմ (իմ ըղորմածիկ կեսուրն էլ ա էդ օղբաթն իմ գլխին դրել)։ Դրան մի սիրուն ախլիկ ա ըլըմ։
Աղունակնին ասըմ են.— Էս ախչկանն ի՞նչ խնթրենք։
Մինն ասըմ ա.— Ես խնթրըմ եմ ասծանե, որ ծիծաղի, պատերը վարթ-մանիշակ դառնան։
Մինն էլ ասըմ ա.— Ես խնթրըմ եմ, որ դրան լեղացնեն հա, ջուրը տաշտակըմը ոսկի դառնա։
Էն մինն էլ ասըմ ա.— Ես էլ խնթրըմ եմ, որ դա լաց ըլի հա, ըրտասունքնու տեղ մարքարիտ ու ջավահիր վեր գա աչկերիցը։
Ասըմ են ու իրանք էդ կտրովը թևին տալիս ու թռչըմ։
Նոքարը դռանն անկաճ ա դնելիս ըլըմ, գնըմ ա կեսորն ասըմ, թե.— Դու տապ արա, տապ արա, աղավնքերն էկան ազատեցին, սհե-սհե բաներ ասին։
Կեսուրը նոր գալիս ա, սատանութին ա անըմ, գնըմ ա ըրեխին խտտըմ, ծիծաղացնըմ ա, մին էլ տենըմ ա պատերը վարթմանիշակ դառան։ Հմի էլ լացացնըմ ա, տենըմ ա, որ աչկերիցը մարքարիտ ու ջավահիր ա վեր դառնըմ։ Եդնա տանըմ ա լեղացնըմ, հմի էլ տաշտակը լիքր ոսկի ա դառնըմ։
Դրանից եդ՝ ով տարով կվենձանա, նա օրով ա վենձանըմ։
Էն քյավթառ կեսուրը մի հասած ախչիկ ա ունենըմ, դա վենձանըմ ա, դառնըմ նրա զդար։ Մի օր գալիս ա դրան մի տղի հմար ուզըմ։ Դրա մերը լավ բաժինք ա շինըմ, զուքըմ, զարթարըմ, զանդուկնին շորերով լքցնըմ, փագըմ, բլանիքն իրա ախչկա մազերըմ պիըմ, որ գնա իրա մարթի տանն իրա ձեռովը բաց անե։
Էդ քյավթառն էլ իրա քրքրված ախչկա հետ վի ա կենըմ, հրսանքավորնու հետ գնըմ, մթամ թե հրսնախպեր ա դառնըմ։ Գնըմ են մի ծմակըմ, մի ախպրի կշտի վեր գալի, որ համ դինջանան, համ էլ հաց ուտեն։ Քյավթառն իրան ախչկանն ու թոռին մթամ տանըմ ա ջոգ հցավորե, չունքի վաղ հարսն իրավունք չուներ հրսանքավորնու կշտին աշկարա հաց ուտելու։ Տանըմ ա մի տալդա տեղ թոռի աչկերը հանըմ ա, գձըմ ա եդ ջեբը (թոռի ջեբը) նրա շորերը հանըմ ա, իրա ախչկանը հաքցնըմ, իրա ախչկա շորերն էլ նրան ա հաքցնըմ, ըտի դրան թողըմ ա, գնըմ հրսանքավորնու կուշտը։ Էն նաչարին ընդի թողըմ են, նրա քրքրվածին տանըմ իրանց հարսնացու։
Էդ վախտը մի հլիվոր գալիս ա ծմակը փետ կտրելու։
Ախչիկը կացնի ձենը որ լսըմ ա հա, ձեն ա տալի, ասըմ ա.— Էդ ո՞վ ես հեյ, այ բիձա ջան, այ քեռի ջան, այ ախպեր ջան, էկեք ինձ ըստիան տարեք, քոմագ արեք։
Էն հլիվորը գալիս ա տենըմ, որ գյոզլու մի ախչիկ ընդի վեր ընգած ա։
Ասըմ ա.— Ախչիկ ջա՛ն, իրեք քոռ ախչիկ էլ ես ունիմ, քեզ էլ տանիմ նրանց հետը ո՞նց պիեմ։
Ասըմ ա.— Բիձա ջա՛ն, տար, բան չի կա, ես քեզ օքուտ կտամ։
Դրա ձեռիցը բռնըմ ա, բերըմ ա տուն։

Ասըմ ա.— Բալենի ջա՛ն, իրեքը չըլիք, չորսն ըլիք, մի ձեր բախտին արժանացած ախչիկ էլ եմ բերել ձեզ քիր։
Ասըմ են.— Հայրիկ ջա՛ն, յարաբ մենք շատ բախտավորն ենք, որ էդ նաչարին էլ բերի՞ր։
Ասըմ ա.— Բան չի կա, իմ քրդինքով ես ձեզ կպիեմ։
Եդնա էն ախչիկը հլիվորին խնթրըմ ա, ասըմ ա.— Դու ջուր տքացրու, տաշտակն էլ բի ըստի դիր, դուս գնա, մենք իրար կլեղացընենք։
Հլիվորը տհենց ա անըմ։
Եդնա ինքն էն իրեքին լեղացնըմ ա, հաքնըմ են, ասըմ ա.— Դե դուք էլ ինձ լեղացրեք։
Լեղացնըմ են, դուս ա գալի հաքնըմ։ Հլիվորը տուն ա գալի։ Գալիս ա տենըմ տաշտակը լիքը ոսկի։ Մնըմ ա հուշ էլած, հմա ախչիկն ասըմ ա.— Էդ իմ հունարն ա, բան չի կա։
Եդնա ծիծաղըմ ա՝ տենըմ ա պատերը վարթ-մանիշակ դառավ։ Ըտի էդ հլիվորն ուրխանըմ ա, առոք-փառոք ապրըմ են։ Եդնա էդ հլիվորը ախչկերանցը թաթնաբոնուկ անիլ ա տալի, ինքն աղաք ա ընգնըմ, ձեռներուցը բռնըմ տանըմ ա ման ածելու։ Գնըմ են մի ախպրի կշտի դինջանըմ։ Հլե մին էլ տենըմ են, որ իրեք աղունիկնի էկան էն ախչկա գոքըմը վեր էկան։
Դրանք ախչկա ջեբիցը աչկերը հանըմ են, դնըմ են տեղը։ Ամեքն իրանցից մի բմբուլ ա վեր գձըմ, հլիվորին ասըմ են՝ էդ ախպրըմը թթախե, քսե աչկերին։ Հլիվորը մայիլ կտրած բմբլնին թթախըմ ա ախպրի միչին ու քսըմ ա աչկերին։
Ախչկա աչկերը բաց են ըլըմ, ուրխանաս, ինչ ուրխանըմ ա, եդնա աղունակնուն խնթրըմ ա, ասըմ.— Իմ քվորտանց աչկերն էլ լավացրեք։
Նրանք ասըմ են.— Էդ բմբլնին թթախեցեք ախպրի միչին, ամեն մի բմբլով մի ախչկա աչկի քսեցեք։
Քսըմ են, իրեքի աչկերն էլ սղանըմ են։ Դրանք ըտի փթաթորվըմ են իրար, ուրխանըմ են, աղունիկնին էլ ծափ են տալիս ու թռչըմ, գնըմ։
Ուրխանալով դրանք տուն են գալիս։ Էդ ախչիկը մի բոլ դրանց հարստացնըմ ա, եդնա հրսանիքի ձեն ա լսըմ։
Ասըմ ա.— Հայրիկ ջա՛ն, ինձ տանիլ չե՞ս էդ հրսանիքը թմաշա անեմ։
Ասըմ ա.— Խի՞ չեմ տանիլ, բալա ջա՛ն։
Դրան տանըմ ա հրսանիք։ Գնըմ ա տենըմ, որ իրա փեսացուն ունքերը կիտած, մտկամոլոր նստած ա, էն քյավթառն ու իրա քրքրված ախչիկն էլ հմբարտ-հմբարտ, ուռուցորված, հարսի թախտին նստած են։ Էն նաչար տղեն սիրտն իմացած ա ըլըմ, էն անսկամին ինչքան ծիծաղացնըմ ա, տենըմ ա, որ պատերը վարթ-մանիշակ չեն դառնըմ, լացացնըմ ա, աչկերիցը մարքարիտ ու ջավահիր չի վեր գալի, գլուխը լվանալ ա տալի, ոսկի չի դառնըմ։
Ասըմ ա.— Տհանք ինձ խափել են։
Համ էլ տենըմ ա, որ էդ էն սիրուն հուր ու մալաք ախչիկը չի, սիրտը կոտրում ա, ընգնըմ ա մտկի մեչ։ Էդ ախչիկը որ գնըմ ա հրսանիք հա, տղեն որ տենըմ ա, սիրտը վեր ա թռչըմ, մտկըմն ասըմ ա.— Կասես սա իմ հարսնացուն ըլի,— հմա եդ նամուս ա անըմ։ Խալխն էլ են մայիլ կտրել դրա սիրունութենի վրա։
Ըստիան-ընդիան ասըմ են.— Պա՛ր ածեք, պա՛ր ածեք։
Դրան պար են ածըմ, չիմն էլ մնըմ են հուշ էլած։ Էն քյավթառն ու իրա քրքրվածը ճնանչըմ են, հլենհե, ոնց որ ասղով ծկծակորված, տեղներուն վեր-վեր են թռչըմ։ Էդ ախչիկը որ պարը պրծնըմ ա, ուզըմ ա դուս գա, տղեն էլ նամուս չի անըմ, գալիս ա աղաքը կտրըմ։
Ընդիան էն պառավն ու իրա պոճկվածը ծվծվրմ են, թե.— Դուս արեք դրան ըստիան, դուս արեք դրան։

Հմա էլ ո՞րդի, տղեն ճնանչըմ ա։ Ախչկա ձեռիցը բռնըմ ա, թե բան ասե, ախչիկը գլուխը քաշ ա անըմ, լաց ա ըլըմ։ Որ դրա աչկերիցը մարքարիտ ու ջավահիր ա վե դառնըմ, տղեն էլ մտիկ չի անըմ, փթաթորվըմ ա դրան ու պաչըմ։ Ախչիկն ուրախանալուցը ծիծաղըմ ա, սաղ պատերը վարթ-մանիշակը լքցվըմ ա։ Եդնա էն քավթառին ու իրա անսկամին բերըմ են ղաթրի պոչիցը կապըմ, էնքան քաշ են տալիս, թիքա-թիքա են անըմ։
Թազա դրանց բերըմ են հրսանիք են անըմ, ուրխանըմ են, օխտն օր, օխտը քշեր քեփ են անըմ, հասնըմ են իրանց մուրազին, դուն էլ հասնիս քու մուրազին։